ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց Ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30-ը հուլիսի 2020 թվականի N 57 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

ավագանին որոշում է՝

1.Հաստատել 30-ը հուլիսի 2020թ. թիվ 5 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2020թ. առաջին կիսամյակի բյուջեի կատարման ընթացքի մասին,

3.Եղեգիս համայնքի ավագանու 29/04/2020թ. թիվ 34Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

4.Արտաբույնք բնակավայրում խմելու ջրի հին խողովակաշարի մի հատվածը ապամոնտաժելու, և խողովակներից օգտագործման համար համայնքի բնակիչներին տրամադրելու մասին,

5.Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1.01719հա մակերեսով հողը աճուրդով օտարելու մասին,

6.Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.382հա մակերեսով հողը աճուրդով օտարելու մասին,

7.Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.20267հա մակերեսով հողը աճուրդով օտարելու մասին,

8.Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.25216հա մակերեսով հողը աճուրդով օտարելու մասին,

9.Եղեգիս համայնքի Հերմոն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող

համայնքային սեփականություն հանդիսացող մակերեսով հողերը աճուրդով օտարելու մասին,

10.Եղեգիս համայնքի գույքագրման ցուցակներում լրացումներ կատարելու մասին,

11.2020 թվականի բյուջեում վերաբաշխումներ կատարելու մասին,

12.Եղեգիս համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի և իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվության հաստատման մասին,

13.Եղեգիս համայնքի ավագանու 31/08/2018թ. թիվ 57Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Չեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30-ը հուլիսի 2020 թվականի N 58 Ա

ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով

ավագանին որոշում է՝

Ընդունել ի գիտություն Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2020թ. առաջին կիսամյակի բյուջեի կատարման ընթացքի մասին /համաձայն սույն որոշման կից հավելվածի/:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բացակա

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Սիլվիա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Եղեգիս համայնքի ավագանու
30–ը հուլիսի 2020թ. N 58Ա որոշման

Եկամտային մաս. հազ.դրամ

Եկամտատեսակ	Նախատեսված /1-ին կիսամյակ/	Կատարողական /1-ին կիսամյակ/	Կատարման տոկոս
Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	4 900.0	3 509.4	71.6
Գույքահարկ	1 2650.0	6 386.2	50.5
Տեղական տուրքեր	467.5	544.2	116.4
Ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ	6 400.0	5 542.2	86.6
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	87 921.7	87 921.7	100
Այլ դոտացիաներ	0	780.0	780.0
Տեղական վճարներ	5 250.0	801.0	15
Այլ եկամուտներ /Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ,օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/	0	1 329.2	1 329.2

Ծախսայինմաս	Նախատեսված /1-ին կիսամյակ/	Կատարողական /1-ին կիսամյակ/	Կատարման տոկոս
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	51 000.0	45 628.4	89.5
Պարգևատրումներ	2 000.0	1 283.3	64
Էներգետիկ ծառայություններ	5000.0	4164.5	83
Կոմունալ ծառայություններ	5100	4186.0	82
Կապի ծառայություններ	1000.0	784.7	78
Գործողությունների և շրջագայությունների ծախսեր	400.0	39.2	9.8
Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում	8070.000	1764.0	22
Դրամաշնորհներ	21557.0	12530.0	58
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	2250.0	805.0	36
Այլ ծախսեր	575.0	223.5	39
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն	26618.0	2049.9	7.7
Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ	950.0	780.0	82
Նյութեր	5850.0	3832.2	65.5

Համայնքի ղեկավար ..... Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30-ը հուլիսի 2020 թվականի N 59 Ն

ԱՎԱԳԱՆՈՒ 29/04/2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 34Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով

ավագանին որոշում է՝

Եղեգիս համայնքի ավագանու 29-ը ապրիլի 2020 թվականի ««ԳԵՏԻԿՀԷԿ» ՍՊԸ-ին սերվիտուտով հողատարածքներ տրամադրելու մասին» թիվ 34Ա որոշման բովանդակության մեջ «500 000 (հինգ հարյուր հազար)» թիվը և բառերը փոխարինել «50 000 (հիսուն հազար)» թվով և բառերով:

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մելիքսետ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30-ը հուլիսի 2020 թվականի N 60 Ա

ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՀԻՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ ՄԻ ՀԱՏԿԱԾԸ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ, ԵՎ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմում-խնդրանքը, համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի բակիչների միջոցներով ապամոնտաժելու 1968-69թ.թ. կառուցված, քայքայվածության պատճառով ներկայումս չշահագործվող խմելու ջրի նախկին ջրագիծը, որից 140գմ-50մմ /2 դյույմ/, 40գմ-75մմ /3 դյույմ/ և 1157գմ-110մմ /4 դյույմ/, ընդհամենը 1337/մեկ հազար երեք հարյուր երեսունյոթ/ գմ:

2. Հաշվի առնելով ապամոնտաժման ընթացքում բնակիչների կողմից կատարված ծախսերը և խողովակների իրական վիճակը այն անվարձահատույց հատկացնել ապամոնտաժող բնակիչներին՝ ըստ ցուցակի /կից որոշման հավելվածի/, պարտավորեցնելով , որ խողովակները օգտագործվի միայն բնակավայրում հողատարածքների ոռոգման առուների նորոգման համար:

Կողմ՝ 0 Դեմ՝ 5 Ձեռնպահ՝ 2

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Կողմ՝ Դեմ՝ Ձեռնպահ՝

Մարտիրոսյան Նորայր բացակայում

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Եղեգիս համայնքի ավագանու
30-ը հուլիսի 2020թ. թիվ 60Ա որոշման

1.ՎարդանյանԱրամայիսՆարիբեկի-20մ,4 դյույմ
2.ՔարամյանԵսայիԲախշիի-20մ, 4 դյույմ
3.ԻսրայելյանՌաֆիկՋիվանի-13մ, 4 դյույմ
4.ՎարդանյանԱրսենԿարապետի -8մ, 4 դյույմ
5.ՍաֆարյանԱլբերտՆարիբեկի -40մ, 4 դյույմ
6.ՍտեփանյանՍտեփանՊարգևի-28մ, 4 դյույմ
7.Վարդանյան ԲարսեղԱտոմի-20մ, 4 դյույմ
8.ՍարգսյանՆվերՌաֆիկի-35մ, 2 դյույմ
9.Գասպարյան Ռուդիկ Յուրիկի -50մ, 2 դյույմ
10.ՔարամյանԷմմաՍերգեյի-50մ, 4 դյույմ
11.ՋաքարյանԱրաՀարութիկի-15մ, 4 դյույմ
12.ՍահակյանՍամվելՍամսոնի -15մ, 4 դյույմ
13.ՎարդանյանԱրմենԱվագի-15մ, 4 դյույմ
14.ԳաբրիելյանՆապոլեոնՖիդանի -20մ, 4 դյույմ
15.ԱրշակյանԱլեքսանՍասնիկի-20մ, 4 դյույմ
16.ՀովհաննիսյանԺենիկՂևոնդի-9մ, 4 դյույմ
17.ՀարությունյանՀրանուշՄաթևոսի-4մ, 4 դյույմ
18.ՄկրտչյանՀովիկԺորժիկի-25մ, 4 դյույմ
19.ՇահգալդյանԿարապետԱլբերտի-16մ, 4 դյույմ
20.ՀարությունյանՎազգենՎարազդատի-10մ, 4 դյույմ
21.ՄարտիրոսյանՑոլակՖելիքսի-50մ, 4 դյույմ
22.ՍարգսյանԷդգարԱվետիսի—20մ, 4 դյույմ
23.ՀովհաննիսյանԼուսինեՍամվելի-50մ, 4 դյույմ
24.ՄիքայելյանՍեթՍարգսի-20մ, 3 դյույմ
25.ԳաբրիելյանԱրայիկԲուրաստանի-50մ, 4 դյույմ
26.ՔարամյանԳագիկԲախշիի-50մ, 4 դյույմ
27.ՍարուխանյանՀուսիկՍարիբեկի-10մ, 4 դյույմ
28.ԳևորգյանՌաֆիկԽաչատուրի-20մ, 4 դյույմ
29.ՄնացականյանԱրիստակեսԱնդրանիկի-30մ, 2 դյույմ
30.ՍաֆարյանՄերուժանԳվիդոնի-27մ, 4 դյույմ
31.ՔարամյանՄիսակՓայլակի-35մ, 4 դյույմ
32.ԽանգալդյանԵրվանդՍիսակի-30մ, 4 դյույմ
33.ՀարությունյանՍվետաՄաթևոսի-9մ, 4 դյույմ
34.ՍողոմոնյանՋանիկՓայլակի-25մ, 2 դյույմ
35.ՇահգալդյանԱլբերտԿարապետի-20մ, 3 դյույմ
36.ՄեղրակյանԱրթուրԳրիգորի - 20մ, 4 դյույմ
37.ԹադևոսյանՄերուժանՖելիքսի - 20մ, 4 դյույմ
38. ԲաբլոյանԿամոԳրիգորի - 20մ, 4 դյույմ
39.Մկրտչյան Արմենակ Ֆրունզիկի 30մ, 4 դյույմ
40.Իսախանյան Գեղամ Իշխանի-30մ, 4 դյույմ
41.Խլխաթյան Խաչատուր Վահրամի -29մ, 4 դյույմ
42.Քարամյան Արա Սերյոժայի- 30մ, 4 դյույմ
43.Վարդանյան Էդիկ Անդրյազի -29մ, 4 դյույմ
44. Արտաբույնք բնակավայրում <<Խոյլիների>> կոչվող թաղամասում 28 տնտեսությունների համար ոռոգման ջրի ցցուցակորոշման նպատակով 250մ, 4 դյույմ.

Համայնքի ղեկավար Ա. Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30-ը հուլիսի 2020 թվականի N 61 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1.01719ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-035-0268-0004, մակերեսը՝ 1,01719հա/ աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 130%-ի չափով:

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ՝ 6 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Միհրան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30-ը հուլիսի 2020 թվականի N 62 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.382ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածո Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 28 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչակա սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսակա նշանակության այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-035-0231-0067, մակերես 0,382հա/ աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 130%-ի չափո

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ՝ 4 Դեմ՝ 3 Ձեռնպա

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Խաչատուր

Վարդանյան Մեսրոպ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30-ը հուլիսի 2020 թվականի N 63 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.20267ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-035-0228-0149, մակերեսը՝ 0,20267հա/ աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 130%-ի չափով:

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ՝ 4 Դեմ՝ 3 Ձեռնպահ՝

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արամայիս

Վարդանյան Միհրան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
22 Վայոց Ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30-ը հուլիսի 2020 թվականի N 64 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.25216ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-035-0242-0045, մակերեսը՝ 0,25216հա/ աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 130%-ի չափով:

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ՝ 4 Դեմ՝ 3 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Նիկոլայ

Վարդանյան Դիանա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց Ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30-ը հուլիսի 2020 թվականի N 65 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքերը /կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102-0039, մակերեսը՝ 0,26295հա և կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102-0038, մակերեսը՝ 1.31925հա / աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 130%-ի չափով:

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ՝ 6 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արամայիս

Վարդանյան Սիմոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30-ը հուլիսի 2020 թվականի N 66 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՅՈՒՅԱԿՆԵՐՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի /ՀՏԶՀ/ կողմից նպատակային նվիրաբերության պայմանագրով որպես նվեր ձեռք բերված ստորև ներկայացված ցանկով տեխնիկական միջոցները և սարքավորումները գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի 2020թ. գույքային հաշվեկշռում՝

հ/հ	Ապրանքի անունը	քանակ, հատ	Մոդել	Vin կոդ	գին, ՀՀ դրամ
1	Միկրոավտոբուս Գ	1	ԳԱԶ 322173-753	X96322173L0899564, տարեթիվ՝ 2020թ.	10,750,000
2	ՈՒազ 390945-552	1		XTT390945L1212784, տարեթիվ՝ 2019թ.	7,100,000
3	Սամլիչ հասկահավաք RSA 86 SN99045136	2			7,600,000
4	Ազոտային գության՝ քառախոփ ՊԳՊ-4-40-3	2			2,035,000
	Ընդամենը՝				27485000 /քսանյոթ միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար/

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Չեռնպահ՝ 0

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց Ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30-ը հուլիսի 2020 թվականի N 68 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով

ավագանին որոշում է՝

Հաստատել Եղեգիս համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի և իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունը, համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր բաց է թողել

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր բաց է թողել

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Միհրան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Եղեգիս համայնքի ավագանու
30-ը հուլիսի 2020թ. N 68Ա որոշման

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020
Հուլիս

2020թ-ին Եղեգիս համայնքում աշխատանքներն ու ծրագրերն իրականացվել են՝ համաձայն համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի դրույթներին, 2020թ. տարեկան աշխատանքային պլանի, համայնքի 2020թ. բյուջեի՝ հաշվի առնելով համայնքի առկա ռեսուրսները, առանձնահատկությունները, զարգացման գերակա ուղղությունները, նախապես քարտեզագրված ծրագրային առաջնահերթությունները:

Իրականացված աշխատանքների շնորհիվ գրանցվել են հետևյալ արդյունքները՝ ըստ ոլորտների և ուղղությունների:

Հողի հարկ և գույքահարկ

Համայնքի վարչական տարածքում գտնվող շենք- շինությունների համար գույքահարկի 1-ն կիսամյակի պլանը նախատեսված է եղել 150.000 դրամ: Հավաքագրումը կազմել է 100.300 դրամ:

Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկի հավաքագրումը, առաջին կիսամյակում նախատեսված է եղել 4.900.000 դրամ, հավաքագրվել է 3.509.400 դրամ /71.6%/: Փոխադրամիջոցների գծով առաջին կիսամյակում գույքահարկի հավաքագրումը նախատեսված է եղել 12.500.000 դրամ, կատարվել է 50.1%-ով. հավաքագրվել է 6.286.200 դրամ:

Առևտրի և սպասարկման գծով առաջին կիսամյակում տեղական տուրքերի՝ պլանավորված է 467.500 դրամ, կատարվել է 544.200 դրամ, կատարվել է 116.4%-ով.:

Քաղաքաշինություն

2019թ. հուլիսի 1-ից մինչև 2020թ. հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածում Եղեգիս համայնքի հողային հաշվեկշռում կատարված փոփոխությունների վերաբերյալ տվյալներ:

Ա) 1) բնակավայրերի նշանակության պետական սեփականություն հանդիսացող 0.71078հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը փոխարինվել է հասարակական կառուցապատման հողամասի:

2)քաղաքացու սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության՝ բնակելի կառուցապատման հողամասերը 0.39928հա փոխարինվել է հասարակական կառուցապատման հողամասերի:

2) Քաղաքացու սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողատեսքերից 0.001767հա փոխարինվել է հասարակական կառուցապատման հողատեսքի:

Բ) 1)Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից 7.08266հա հողատարածք համայնքային սեփականությունից փոխարինվել է քաղաքացիների սեփականության հողատեսքների:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողատեսքերից 0.36057հա հողատարածք փոխարինվել է քաղաքացիների սեփականության հողատարածքի:

3)քաղաքացու սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասերից 0.091հա հողատարածք փոխարինվել է համայնքային սեփականության հողամասի:

Գ) տրվել է վարձակալության՝ Քաղաքացիներին

1)Համայնքային սեփականություն հանդիսացող՝ արոտ 429.246հա
2)խոտհարք 14.9հա
3) գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 0.4հա:

Դ) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից օտարվել է քաղաքացիներին՝ գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 1.21497հա գյուղատնտեսական նշանակության արոտ 4.39513հա գյուղատնտեսական նշանակության խոտհարք 1.41769հա բնակավայրերի նշանակության այլ հողատեսքերից 0.36057հա:

1)հրաժարվել են կամովի՝ բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասից 0.091հա, որը դարձել է համայնքային սեփականություն:

Ե) 1) քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը 0.2հա փոխարինվել է գյուղ նշանակության արոտի:

2)Քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողը 1.4հա փոխարինվել է հնդավոր այգու:

3)Քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը 0.24295հա փոխարինվել է վարելահողի:

2020թ. աճուրդային կարգով օտարվել է 19311.6քմ մակերեսով հողատարածք, որից՝ 2429.5քմ-ը՝ գյուղ. նշ. Այլ հող., 100քմ-ը՝ բնակելի հասարակական, 2605.2 քմ-ը՝ բն. Նշ. Այլ հող. գյուղ. Խոտհարք 14176.9քմ համայնքային բյուջե է մուտքագրվել 1.179.435հազ. դրամ:

Շարունակվել է ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման գործընթացը:

Ընդունվել է համայնքի ղեկավարի 136 որոշում, որից՝ օրինականացվել է բնակելի տուն:

Ընդունվել է հասցեի տրամադրման 38 որոշում:

Տրվել է 3 շինարարական թույլտվություն, համայնքային բյուջե է մուտքագրվել 45,000 դրամ, տրվել է ճարտարապետահատակագծային 13 առաջադրանք:

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է՝

ա/ Ոռոգման խողովակաշարի կառուցում

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը

1. *Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի մայր առուն ունի 7կմ երկարություն և ոռոգում է շուրջ 150 տնտեսությունների տնամերձ հողամասերը և այգիները: Ոռոգման առվի 300մ հատվածը գտնվում է ոչ բարվոք վիճակում և կա հիմնանորոգման խիստ անհրաժշտություն, քանի որ խողովակաշարի բացակայության պատճառով՝ ջուրը դուրս է գալիս հիմնական*

առվից և ստեղծում սողանքներ, վնասում բնակիչների բնակհատվածները, ինչպես նաև մոտ 60 տոկոս ջրի կորուստ է տալիս, որի հետևանքով նվազում է ջրօգտագործման արդյունավետությունը : Հարկ է նշել , որ մայր առուն երեք փուլով վերանորոգվել է նախորդ տարիներին և տվել որոշակի արդյունք : Ներկա պահին ոռոգման համակարգի վիճակը խիստ ռիսկային է և խոչնդոտում է նաև գյուղատնտեսության բնականոն զարգացմանը:

2. *Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի մայր առուն ունի մոտ 6 կմ երկարություն և ոռոգում է շուրջ 130 տնտեսությունների տնամերձ հողամասերը և այգիները: Ոռոգման առվի 680 մ հատվածը գտնվում է ոչ բարվոք վիճակում և կա հիմնանորոգման խիստ անհրաժշտություն , քանի որ խողովակաշարի բացակայության պատճառով՝ ջուրը դուրս է գալիս հիմնական առվից և ստեղծում սողանքներ, վնասում բնակիչների բնակհատվածները, ինչպես նաև մոտ 45տոկոս ջրի կորուստ է տալիս, որի հետևանքով նվազում ջրօգտագործման արդյունավետությունը: Հարկ է նշել, որ մայր առվի մնացած մասը վերանորոգվել է նախորդ տարիներին և էական արդյունք տվել: Ներկա պահին ոռոգման համակարգի վիճակը խիստ ռիսկային է և խոչնդոտում է գյուղատնտեսության բնականոն զարգացմանը:*
3. *Եղեգիս համայնքի Շատին և Սալլի բնակավայրերում անհրաժեշտ է 260մ խողովակի տեղադրում, որով ոռոգվում է շուրջ 250 տնտեսությունների տնամերձ հողամասերը և այգիները: Ոռոգման առվի 260մ հատվածը գտնվում է ոչ բարվոք վիճակում և կա հիմնանորոգման խիստ անհրաժշտություն , քանի որ խողովակաշարի բացակայության պատճառով՝ ջուրը դուրս է գալիս հիմնական առվից և ստեղծում սողանքներ, վնասում բնակիչների բնակհատվածները, ինչպես նաև մոտ 30 տոկոս ջրի կորուստ է տալիս, որի հետևանքով նվազում է ջրօգտագործման արդյունավետությունը: 160մ ամբողջական խողովակաշարը լուծելու է Շատին և Սալլի բնակավայրերի 50 այգիների ոռոգման խնդիրը: Ներկա պահին ոռոգման համակարգի վիճակը խիստ ռիսկային է և խոչնդոտում է գյուղատնտեսության բնականոն զարգացմանը:*
4. *Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի ոռոգման առուն ունի 1250մ: Այն ոռոգելու է մոտ 90 հա ջրովի վարելահող: Այս ծրագրի միջոցով Վարդահովիտ բնակավայրում կստեղծվեն մոտ 50 հա պտղատու այգիներ և 40 հա ցանքատարածություններ:*
5. *Եղեգիս համայնքի Հերմոն բնակավայրի <<Ցորենանոց>> կոչվող տարածքի ոռոգման համար նախատեսվում է կառուցել 2200մ երկարությամբ խողովակաշար, որի շնորհիվ ոռոգելի կդառնա 80 հա ջրովի վարելահող: Այս ծրագրի իրականացումով Հերմոն բնակավայրի այգիների ծավալը կավելանա մոտ 70 տոկոսով:*

Եղեգիս համայնքի Շատին բնակավայրում նախատեսվում է տեղադրել 120մ երկարությամբ խողովակաշար: Շատին բնակավայրում նիխկինում գոյություն ունեցող թմբային առվի փլուզման հետևանքով ոռոգման հետ կապված առաջանում էին լուրջ խնդիրներ, որոնք լուծելու համար անհրաժեշտ է 120մ խողովակաշարի տեղադրում, որից կօգտվեն մոտ 200 տնտեսություններ:

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում, բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի

1. *Քարագլուխ բնակավայր 300մ 530մմ պողպատյա կիսախողովակ*

2. *Մալլի բնակավայր 260մ 325մմ պողպատյա խողովակ*
3. *Շատին բնակավայր 127մ 530մմ պողպատյա կիսախողովակ, 11 մ 530 մմ պողպատյա խողովակ*
4. *Աղնջաձոր բնակավայր 150մ 530մմ պողպատյա կիսախողովակ*
5. *Հերմոն բնակավայր 2200մ 200մմ պոլիէթիլենային խողովակ*
6. *Վարդահովիտ բնակավայր 1150մ 273 մմ մետաղական խողովակ*

Ծրագրի ընթացքում կբացվեն 40-50 ժամանակավոր աշխատատեղեր:Անհրաժեշտ կլինի 7-8 եռակցող, 30-40 բանվոր:

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ *165,883,47 միլին ՀՀ դրամ, որից Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը 41,755,080 դրամ (Եղեգիս համայնք 35%) Քանի որ, վերոնշյալ ծրագրերից Վարդահովիտ բնակավայրը հանդիսանում է բարձր լեռնային, ոռոգման խողովակաշարի անցկացման նախագծանախահաշվային արժեքից (46,583,240 ՀՀ դրամ-ից) Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի ներդրումը կազմում է (11.645.810 ՀՀ դրամ) 25%, իսկ սուբվենցիայի գումարը դառնում է (34,937,430 ՀՀ դրամ) 75%, համայնքի ներդրումը կազմում է 0%, ուստի համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափի մեջ ներառված չէ Վարդահովիտ բնակավայրի համայնքային ներդրման գումարը: Ծրագրի ընդհանուր բյուջեից՝ 165,883,470 ՀՀ դրամից 46,583,240 դրամ համայնքային ներդրման բացակայության հիմքով, համայնքային ներդրումը հաշվարկվել է 119,300,230 Դրամի (35%), որը կազմում է 41,755,080 ՀՀ դրամ :*

բ/ *Խմելու ջրի խողովակաշարի կառուցում և վերանորոգում,ՕԿՋ-ների վերանորոգում*

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը

Եղեգիս համայնքի Գողթանիկ, Թառաթումբ և Հորբատեղ բնակավայրերում Խմելու ջրի խողովակաշարերը կառուցվել են դեռևս խորհրդային ժամանակաշրջանում և արդեն հիմնականում շարքից դուրս են եկել ու հսկայական ջրի կորուստի պատճառով բնակչության չի բավարարում:

1. *Թառաթումբ 328մ 50մմ պոլիէթիլենային խողովակ*
2. *Հորբատեղ 500մ 100մմ պոլիէթիլենային խողովակ*
3. *Գողթանիկ 1000մ 100մմ պոլիէթիլենային խողովակ*
4. *Շատին ՕԿՋ-ի պսատերի և հատակի նամրացում40 քմ:*

Շատին բնակավայրում ունենք ՕԿՋ-ի վերանորոգման խնդիր որպեսզի կարողանանք բավարարել բնակչության 24-ժամյա անխափան ջրամատակարարմամբ: Այս ծրագրի իրականացմամբ մոտ 2500 մարդ կապահովվի անխափան ջրամատակարարմամբ:

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում, բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի

1. *Գողթանիկ բնակավայր 1000 մ 100մմ տրամագծով խողովակաշար*
2. *Հորբատեղ բնակավայր 500 մ 100մմ տրամագծով խողովակաշար*
3. *Թառաթումբ բնակավայր 328մ 50մմ*

Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա

1. *Ծրագրերից կօգտվեն Եղեգիս համայնքի մոտ 2500 բնակիչ:*
2. *Խմելու ջրի խողովակաշարերից կօգտվեն 750 տնտեսություն:*
3. *Աշխատատեղեր 40-50 մարդ :*

Ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը

Ծրագրի ընթացքում կբացվեն 40-50 ժամանակավոր աշխատատեղեր:Անհրաժեշտ կլինի 7-8 եռակցող, 30-40 բանվոր:

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ *37,914,61միլիոն ՀՀ դրամ , որից Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը 13.270.11 միլիոն ՀՀ դրամ 35%:*

գ/ *Մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ*

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը

Մանկապարտեզի վերանորոգման արդյունքում հնարավոր կլինի 50 երեխայի ապահովել նախադպրոցական կրթությամբ:Շատին բնակավայրում մանկապարտեզի շենքի վերանորոգմամբ նախատեսվում էոր կհաճախեն համայնքում ընդգրկված բոլոր բնակավայրերի երեխաները: Մանկապարտեզի համար նախատեսված շենքի վերանորոգումը լուծում է նաև համայնքի երեխաների այլ համայնքի մանկապարտեզ հաճախելու ինչպես նաև նրանց տեղափոխման հետ կապված ֆինանսական ծախսերի կրճատման հարցերը:Լուծվում է նաև բնակչության զբաղվածության հարցերը,որը մեծ խնդիր էր առաջացնում աշխատաժամանակի ճիշտ օգտագործման համար: Մանկապարտեզի առկայության դեպքում կստեղծվեն նաև նոր աշխատատեղեր:Միավասիկ, ամուր պետության հիմքը լավ կրթությունն է,կրթված և դաստիարակված երեխաներով համայնքը զարգացած է և հզոր:

Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին

Նոր և հարմարավետ մանկապարտեզի շենք, որտեղ կհաճախեն մոտ 50 երեխա:

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում, բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի

1. *Մանկապարտեզի շենք*
2. *Խաղահրապարակ*
3. *Բարեկարգ շրջապատ*

Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա

1.Ծրագրից կօգտվեն Եղեգիս համայնքի 12 բնակավայրերի բնակիչները:
2.Հնարավոր կլինի 50 երեխայի ապահովել նախադպրոցական կրթությամբ
3.Կբացվի մոտ 10 մշտական աշխատատեղ

Ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը

Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվեն 30-35 աշխատատեղ, որից 10 մշտական,իսկ ժամանակավոր՝ 5 վարպետ,15-20 բանվոր:

Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 53.414.557 *ՀՀ դրամ , որից Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը 21.365.822 ՀՀ դրամ (40%)*

«ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ»

«Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» ծրագրի շրջանակներում իրականացվել է երկու ենթածրագիր՝

1. «Եղեգիս համայնքի Թառաթումբ բնակավայրում ներբնակավայրային և միջբնակավայրային ճանապարհների փոսալցում և շերենապատում»:

Աշխատանքների սկիզբը՝ 2020թ. Հունիս 1-ին
Աշխատանքների ավարտը՝ 2020թ. Հուլիս 25-ին
Հատկացված ֆինանսական միջոցների չափը 1.000.000 /ՀՀ դրամ/

Ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվել է ժամանակավոր՝ 4 աշխատատեղ:

Ծրագրերի իրականացման համար համայնքի ներդրումը կազմել է՝ 156000/ՀՀ դրամ/ :

2. «Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրում ներբնակավայրային և միջբնակավայրային ճանապարհների փոսալցում և շերենապատում»:

Աշխատանքների սկիզբը՝ 2020թ. Հունիս 1-ին
Աշխատանքների ավարտը՝ 2020թ. Հուլիս 25-ին
Հատկացված ֆինանսական միջոցների չափը 500.000 /ՀՀ դրամ/

Ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվել է ժամանակավոր՝ 2 աշխատատեղ:

Ծրագրերի իրականացման համար համայնքի ներդրումը կազմել է՝ 126000/ՀՀ դրամ/:

Ներդրումային և բարեգործական ծրագրերի շրջանակներում

Համայնքում իրականացվող բարեփոխումների, զարգացումների առանցքում կարևորվում են ներդրումային ծրագրերը: Այն, ինչը հնարավոր չէ կյանքի կոչել միայն տեղական բյուջեի միջոցների հաշվին, դառնում է իրատեսական կառավարության, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ:

1. ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ԵՐԿՈՒ «ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՎԻՎ»

«Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ» Եղեգիս համայնքին տարածքի հսկողություն իրականացնելու նպատակով տրամադրել է երկու «էլեկտրական հովիվ» սարքերի համար: Սարքերը գյուղացիական տնտեսությունները պաշտպանում է վայրի կենդանիներից և աշխատում է արևային էներգիայով:

հ/հ	Ապրանքի անունը	Չափման միավորը	Քանակը
1	էլ. ցանկապատ շարժական 100մ	հատ	6
2	էլ. ցանկապատի սարքավորում S230	հատ	2
3	Ակումուլյատորային մարտկոց 12Վ 48 Աժ 3.7Լ	հատ	2
4	Հողանցման ձող 0.5մ	հատ	2
5	Պահեստային հենակ	հատ	20
6	Մնուցման մալուխ	մ	50
7	Արևային Պանել 30ՎՏ 12Վ	հատ	2
8	Զայնային ինդիկատոր	հատ	2
9	Հաղորդալար՝ էլ. ցանկապատի	հատ	2

Ընդամենը՝ 2 398 224 /երկու միլիոն երեք հարյուր իննսունութ հազար երկու հարյուր քսանչորս/ ՀՀ դրամ՝ 1.4 հա տարածքի համար:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի /ՀՏԶՀ/ կողմից

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի /ՀՏԶՀ/ կողմից նպատակային նվիրաբերության պայմանագրով որպես նվեր ձեռք բերված՝

հ/հ	Ապրանքի անունը	քանակ, հատ	Մոդել	Vin կոդ	գին, ՀՀ դրամ
1	Միկրոավտոբուս Գ	1	ԳԱԶ 322173-753	X96322173L0899564, տարեթիվ՝ 2020թ.	10,750,000
2	ՈՒազ 390945-552	1		XTT390945L1212784, տարեթիվ՝ 2019թ.	7,100,000
	Ընդամենը՝				17,850,000

Մաքուր Եղեգիս

Համայնքի համար կենսական նշանակություն ունի կոմունալ տնտեսության բնականոն գործունեությունը:
Համայնքում ապահովվում է աղբահանության լիակատար իրականացում ավագանու կողմից հաստատված հայեցակարգով:

Աղբահանության իրականացման նպատակով համայնքային բյուջեից հատկացվել է առաջին կիսամյակի համար 5.100.000 ՀՀ Դրամ:

Գիշերային լուսավորության ցանցի շահագործման առաջին կիսամյակի համար 3.000.000 ՀՀ Դրամ: Աղբահանության ծառայությունների դիմաց հավաքագրվել է առաջին կիսամյակում 731.500 դրամ:

Եղեգիս համայնքն ակտիվորեն մասնակցել է «Մաքուր Հայաստան» նախաձեռնությանը: Մասնակիցում են Եղեգիս համայնքի 12 բնակավայրերից բնակիչներ, ներգարվվում է նաև անհրաժեշտ տեխնիկա:

Փաստաթղթաշրջանառությունը

Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմում ամփոփվել է առաջի կիսամյանի փաստաթղթաշրջանառությունը: Համաձայն աշխատակազմի կողմից տրամադրված տվյալների՝ 2020թ-ի հունվար-հունիս ամիսներին համայնքի ղեկավարին է դիմել 511 քաղաքացի: Բազմաբնույթ դիմումների շարքում գերակշռող են սոցիալական ուղղվածություն ունեցողները, որոնց, ինչպես նաև մյուս դիմումներին, օրենքով սահմանված կարգով տրվել է պատասխան:

Համյնքապետարան ստացած գրությունների թիվը կազմում է 489՝, որից Վայոց ձորի մարզպետարանից ստացվել է 294 գրություն:

Բոլոր հարցումներին տրվել է պատասխան, եղել են նաև ուղղորդումներ:

Համայնքապետարանից ուղարկված գրությունների թվիը կազմում է՝ 565, որից Վայոց ձորի մարզպետարան է ուղարկվել՝ 200 գրություն:

Գրությունների, դիմումների մուտքը և ելքը կատարվել է էլեկտրոնային, փոստային և առձեռն եղանակներով:

Ավագանին կայացրել է 56 որոշում

Տեղական ինքնակառավարումն առանց ավագանու գործունեության չի կարող լինել լիարժեք: Մենք խնդիր ունենք առավել համագործակցված և լայնաշերտ աշխատելու ավագանու հետ, որպեսզի կայացրած որոշումներն էլ լինեն արդյունավետ և նպաստեն համայնքային կյանքի բոլոր ոլորտների բնականոն աշխատանքին:

2020-ի առաջի կիսամյակում համայնքի ավագանին գումարել է 4 նիստ, կայացրել է 56 որոշում:

Ավագանու գործունեության թափանցիկության և հրապարակայնության նպատակով նիստերը տեղադրվում են պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Եղեգիս Համայնք (2020թ. 1-ին կիսամյակ) ամփոփ հաշվետվություն

1.Բնակավայրերի քանակը՝ 12:
2.Հրավիրված խորհրդակցությունների քանակը՝ 13:
3.Համայնքի բնակիչների ընդունելությունների քանակը՝ 511:

4.Բնակավայրերի այցելությունների քանակը՝ 162, որից Շատին՝ 34, Արտաբույնք՝ 18, Հորբատեղ՝ 11, Հերմոն՝ 10, Հորս՝ 12, Վարդահովիտ՝ 7, Գողթանիկ՝ 7, Սալլի՝ 10, Քարագլուխ՝ 18, Աղնջաձոր՝ 19, Թառաթումբ՝ 6, Եղեգիս՝ 10:

5.Ավագանու նիստերի քանակը՝ թվով 4:

6.Ավագանու մշտական հանձնաժողովների քանակը՝ թվով 8

1.Գիտության,կրթության,մշակույթի և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողով,

2.Սոցիալական,առողջապահության, սպորտի և ֆիզիկական կուլտուրայի հարցերի մշտական հանձնաժողով,

3.Քաղաքաշինության,տրանսպորտի,կոմունալ տնտեսության, բնության և շրջակա միջավայրի պահպանության մշտական հանձնաժողով,

4.Ֆինանսավարկային,բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով,

5.Ենթակառուցվածքների գործունեության հարցերով մշտական հանձնաժողով,

6.Համայնքի տնտեսական զարգացման և փոքր ու միջին բիզնեսի աջակցման մշտական հանձնաժողով:

7.Սոցիալական աշխատողի կողմից տնային այցելությունների քանակը՝ թվով 1124

1.Սոցալական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2.Բնակարանային պայմանների ուսումնասիրություն:

8.Հանրային միջոցառումներ՝

1. Հայոց բանակի տոնին նվիրված միջոցառումներ,
2. Տյառն ընդառաջին նվիրված միջոցառում,
3. Մարտի 8-ին նվիրված միջոցառում,
4. Կորոնավիրուսային հիվանդությունից հնարավորինս խուսափելու նպատակով ախտահանման պարբերաբար միջոցառումներ
5.Պատմամշակութային վայրերի մաքրման աշխատանքներ:

9. Ներդրումային ծրագրեր, շենքերի տանիքների վերանորոգում, ճանապարհների սպասարկման և կոմունալ ծառայությունների բարելավում

1. Ընթացքի մեջ են Արտաբույնք և Հորբատեղ բնակավայրերում «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կողմից՝
ա) S-9-21 Հորբատեղ ավտոճանապարհի վերանորոգման աշխատանքները,
բ) Արտաբույնք բնակավայրում խմելու ջրագծի հիմնանորոգման աշխատանքները:

2.Աղնջաձոր բնակավայրում կատարվել են ներբնակավայրային ճանապարհների փոսալցման աշխատանքներ:

3. Աղնջաձոր բնակավայրում վերանորոգվել է ոռոգման ջրի ցանցը:

4.Հորս բնակավայրում մաքրվել է գերեզմանոց տանող ճանապարհը:

5. Հերմոն բնակավայրում կատարվել է ոռոգման առվի մաքրման աշխատանքներ:

6. Հորբատեղ բնակավայրում կատարվել է ոռոգման առվի մաքրման աշխատանքներ:

7. Եղեգիս համայնքի Հորբատեղ բնակավայրում խմելու ջրատարի վերանորոգման աշխատանքներ:

8. Եղեգիս համայնքի Հորբատեղ բնակավայրում առուների մաքրման աշխատանքներ:

9. Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրում հանդամիջյան ճանապարհների քարամաքրման և հարթեցման աշխատանքներ:

10. Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի խմելու ջրի ջրհորի մաքրման աշխատանքներ:

11. Եղեգիս համայնքի Հորս բնակավայրում հանդամիջյան ճանապարհների հարթեցման և բարեկարգման աշխատանքներ:

12. Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրում ներբնակավայրային ճանապարհների փոսալցման և հարթեցման աշխատանքներ:

13. Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրում անասնախմոցի վերանորոգման, զոդման աշխատանքներ:
14. Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի <<Վանքի ձոր>> կոչվող թաղամասում ներբնակավայրային ճանապարհների հարթեցման աշխատանքներ:
15.Եղեգիս համայնքի Հորբատեղ բնակավայրի «Թափ» կոչվող սարում կատարվել է խմելու ջրի վերանորոգման աշխատանքներ:
16.Եղեգիս համայնքի Հորբատեղ բնակավայրում կատարվել է դեպի «Թափ» կոչվող սար տանող ճանապարհի մասնակի հատվածի հարթեցման և բարեկարգման աշխատանքներ:
17.Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրում բարեկարգվել և հարթեցվել է դեպի ,,Բերդաձոր,, հանդամաս տանող դաշտամիջյան ճանապարհի 3 կմ հատվածը:
18.Եղեգիս համայնքի Հորս բնակավայրում հարթեցվել և մաքրվել են դեպի արոտներ և մակատեղի տանող հանդամիջյան ճանապարհները:
19.Իրականացվել է Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի <<Փալոլան>> կոչվող հանդամիջյան ճանապարհների հարթեցման և բարեկարգման աշխատանքներ :
20.Վերանորոգվել է Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի <<Հոստուն>> կոչվող թաղամասի ոռոգման մայր առվի՝ 7 մետր և 3 մետր երկարությամբ վնասված հենապատերը:
21.Եղեգիս համայնքի Հորս բնակավայրում կատարվել են հանդամիջյան ճանապարհների հարթեցման և բարեկարգման աշխատանքներ:
22.Եղեգիս համայնքի Թառաթումբ բնակավայրում կատարվել է խմելու ջրի վթարված հատվածի վերանորոգման աշխատանքներ:
23.Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրում իրականացվել է այգիներն ոռոգող առվի վերանորոգման և մաքրման աշխատանքներ:
24«Եղեգիս համայնքի տեխնիկական վերազինում» ծրագրի շրջանակներում համայնքին տրամադրվեց UAZ 390945 Fermer մակնիշի արտաճանապարհային և տեխնիկական սպասարկման համար նախատեսված մեքենա:

Առաջնահերթություն է տրվել հաշվետվողականությանը

Թափանցիկ աշխատառճի ձևավորման ճանապարհին իրականացվող ծրագրերի շարքում առանձնանում է համայնքապետարանում գործող «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ» ծրագիրը, որն առավել ամբողջական և համակարգված է դարձնում իրականացվող աշխատանքները:

Համայնք-մարզպետարան-կառավարություն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային տարբերակը թույլ է տալիս աշխատանքները դարձնել առավել որակյալ, առավել սեղմ ժամկետում փոխանցել համապատասխան տեղեկատվությունը:

Աշխատանքների առավել արդյունավետության նպատակով, մասնագիտական որակավորման և հմտությունների ապահովման համար աշխատակազմի համայնքային ծառայողներն անցել են ատեստավորում, մասնակցել որակավորման և վերապատրաստման դասընթացների: Համայնքն ունի իր պաշտոնական կայքէջը yexegis.am և ֆեյսբուքյան էջը Եղեգիսի Համայնքապետարան:

Տեղական իշխանությունն իր աշխատանքները կառուցում է՝ գերակա համարելով համայնքապահպան ու համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը:

Համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30-ը հուլիսի 2020 թվականի N 69 Ա

ԱՎԱԳԱՆՈՒ 31/08/2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 57Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Եղեգիս համայնքի ավագանու 31-ը օգոստոսի 2018 թվականի «Զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 57Ա որոշման հավելվածում «Պողոսյան Հրաչյա» բառերը փոխարինել «Արտաշյան Արտաշ» բառերով:

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Չեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ